



## 7. ԶՈՓՉՈՒ ՏՂԵՆ

Ժամանակով մեկ թագավոր կըլնի: Թագավորին իրեք ախչիկ կըլնի, էտ ախչիկներին կասա. «Դու ինձի ի՞նչքան կըսիրեք»: Զոջ ախչիկը կասա, թե՝ քեզի կուզեմ էս աշխարքի չափ, միջնեկը կասա, ինչքան խաղնա ունես, էնքան կըսիրեմ, պղտիկը կասա՝ քեզի կուզեմ աղի դտար:

Թագավորը կասա.—Եփ որ դու ինձի աղի դտար կուզես, աղի փութը էրկու շահի ա, հա՛,—կասի,—գնացեք մա՞ն էկեք, էնպես մե մարդ գտեք, ըսկի քյասիբ ընդուց չըլնի, բերեք, էս իմ ախչիկը տամ ընտոր:

Կէթան, մե չոփչի կըլնի էտ քաղքի մեջը, օրական մեկ շիլակ ցախ կըրերե կըծախսա, կըկառավարի:

Էտ չոփչուն կըկանչա, կասա.—Իմ ախչիկ պիտի տամ քու տղին: Զոփչին կասա.—Թագավո՛ր, դու՝ որտեղ, ես՝ որտեղ, թե գուգես ընձի դազարի բերես, էտի ջոկ:

Թագավորը կասա, թե.—Քեզի ճշմարիտը կասեմ, որ իմ ախչիկը պիտի տամ քու տղեն, ուրիշ հեջ բան մի՛ մտածե, զնա թատարուքդ տե՛ս:

Կէրթա տուն, թագավորը կնկանը կըսե, թե՝ ախչիկս տվեր եմ ֆիլան չոփչուն, որ ըսկի ընտուց քյասիբը չըկա:

Կասե.—Թագավո՛ր, ինչի՞ կըկորցընես ախչըկանդ:

Կասե.—Դու չըլսա՞ր, որ հերեկ ինչ ասաց, թե աղի չափ կըսիրեմ քեզի, աղի փութը էրկու շահի է:

Թագուհին առանձին կըրերա ուրան ակնունքները կըտա ախչըկան, թե՝ զնա ապրե՛ էս խետ:

Զոփչին ուր թատարուք կըտենա, կուզա ախչիկը կառնե, կէթա: Ախչիկը կէթա տենա, ի՞նչ տենա, հավանոց'ն է, խսիր'ն քցեր նստեր են:

Ախչիկը կասա.—Զոփչո՛ւ տղա:

Կասա.—Ի՞նչ ա, թագավորի՛ ախչիկ:

**Կասա. —Քեզի մեկ հատ ակնունք տամ, տար Փիլան սառափի կուշտը խուրդա բեր, գինն էլ էս ա:**

**Չոփչու տղեն կրտանա էն սառափին կըխուրդա, կըբերա:**

**Կըբերա, թագավորի ախչիկն կասա. «Չոփչո՛ւ տղա, գնա տեղաշորեր ա՛ն, բե՛, դազան բե, ինչ հարկավոր ա տան համար, բե՛»:**

**Չոփչու տղեն կէթա, ինչ որ հարկավոր էր տան համար, կառնե կըգա:**

**Մեկէլ օր թագավորի ախչիկը կասա. —Տար էս էրկու ակնունքն էլ էն սառափի կուշտ խուրդա՛, բե՛ր:**

**Կը տանի, կըխուրդի, կըբերի:**

**Կասա. —Չոփչո՛ւ տղա, քեզի ըստեղ մնալ լայեղ չէ, թագավորը հիմանա, մեզի նեղութեն կուտա, գնա մե տեղ աշխատա՞նք գտի, իրեք տարի ժամանակ քեզի, հըմը էնպես մարդու քով մտի, որ հալա աշխատած մալ ըլնի էնտորը, մե մազը հարամ չըլնի մեջը:**

**Էտ տղեն գելնի կէթա, կէթա մեկ հարուստ մարդի, ըորնջպար էր էտ մարդը, որ ծառա մտնի:**

**Կասա. —Թող մե քանի օր մնամ քու տանը, ես քու բնութեն իմանամ, դու իմը, ետնա հախը խոսենք, մտնիմ քե ծառա:**

**Իրիկուն կըմնա, արեք կըմտնի, ըտուր հըմմեն որնջպարը տուն կուգան, ըտոր ըորնջպարի տեղն էլ առանձին կըլնի, բողորին կասա. «Այ տղերը, ձեզի երթում կուտամ, էս մարդի մալի մեջ հեջ հարամ չըկա՞»:**

**Բոլորը հիրար հերես կիշկան, էն մեկ խովիկ կասա. —Էտոր մեկ ուրիշի մալ կար, դարձե հիրեք մալ:**

**Առավտուն լուսը կըրացվի, էտ տղեն կէթա, կասա. —Աղա՛, ես չեմ կանա քու տունը կառավարե, ներողութեն:**

**Կասա. —Որդի՛, մենք հիրեք ախպեր ենք, գնա միջնեկի կուշտը կա՞ց:**

**Տեղը կըսալըդա, թե որտեղ կըկենա:**

**Կէթա միջնեկ ախպոր կուշտը, ինչպես որ էն մեծ ախպորը էլավ, էտ էլ էտենց կէլնի, էլի մալի մեջ հարամ կըգտնի:**

**—Որդի՛, —կըսե, —գուղես գնա՛ իմ պղտիկ ախպոր կուշտը, համա իմ պղտիկ ախպոր քաղաքը շատ զատն ա:**

**Էտ տղեն կէթա էն մարդին էլ կըգտնի: Կէթա էտոր կուշտն էլ կըխարցընա, բան չի գըտնի հարամ:**

**Կասա. —Որդի՛, դե ասա՛, տենամ՝ քու հախն ի՞նչ ա:**

**Կասա. —Աղա՛, դու քո խիղճը, ես էլ բան չունիմ: Իրեք տարի կըմնամ քու կուշտ:**

**Տղան կըմնա, մեկ տարին կըթըմըմա, տղեն գելնի կէթա բազար կըպըտրտի, կըտենա մե բազրկան ուրանց քաղքից ըտեղ կերևս: Կէթա՛ բազրկան, կասա, բարով ես էկե:**

Բազրկյան կասա.—Դու ի՞նչ մարդ ես, ես չեմ ճանչընա:

Տղեն կասա.—Ես թագավորի փեսեն եմ, Զոփչու տղեն եմ:

Բազրկյան կասա.—Ի՞նչ գործով ըստե կրպարապես:

Իրեք տարի ժամանակի մե հարուստ մարդու կուշտ ծառայութեն կէնեմ: Աղա՛, կարելի ա, թե մե հատիա առնեմ, տանես:

—Ինչ առնելու ես, ա՛ռ, բե՛ր:

Տղեն կէրթա տուն, կասա.—Աղա՛, մեր քաղաքիցը մե բազրկյան ա էկե, ուզում եմ մե բան առնեմ, զրկեմ տուն:

—ԱՀԱՆ, որդի՛, մե տասը զուռուշ քեզի, ինչ բանի կրպատաշես՝ սապախտան, առ էկե:

Տղան սապախտան էլավ գնաց բազար, տեսավ՝ մեկ թուրք մե աման գաներ էր զոլթուղը, կըճվար.—Քյուփա սաթարամ, քյուփա սաթարամ:

Ասաց.—Էտ ամանի գինն ի՞նչ ա:

Ասաց.—Տասը զուռուշ ա:

Հանեց տասը զուռուշը տվեց, ամանն առավ, գնաց բազրկյանի կուշտը, ասաց.—Բազրկյան, էսի կրտանես թագավորի ախչկա կուշտը, հատիա եմ առե:

Բազրկյան նոքարին ասաց.—Վերցու դի՛ մե առանձին տեղ, տանենեք թագավորի ախչկան:

Առավ զրեց առանձին տեղ, էկավ, բազրկյան ասաց.—Իշկամ տեսնամ՝ ի՞նչ է էս:

Տեսավ, որ կուպր ա, վերցուց, նստավ զյամին, գնաց: Ծովի մեջ տեղը զյամին ծակվավ, քիչ մնաց օր կործանի:

Գյամըշին ասաց.—Գյամին ծակվավ, հնար գտե՛ք:

Բազրկյանն ասաց.—Մե աման կուպր ունեմ քյասիր մարդի, ի՞նչ կուտաք, որ տամ:

Գյամըշին ասաց.—Ամանը լիքը կըլցնենք ոսկի:

Առան զյամին շինեցին, ամանը ոսկով լցին, տվին բազրկյանին:

Բազրկյան խասավ ուրան քաղաքը, ամանը տվեց նոքարին, ընկավ հառաջ, գնացին թագավորի ախչկա ամարաթի տակ, դուռը ծեծեցին, նոքարը զուս էկավ, թե՛ բազրկյան, ի՞նչ ունես ասելու:

—Թագավորի ախչրկանը բան ունիմ ասելու:

Նոքարը գնաց, ասաց.—Թագավորի՛ ախչիկ, մե բազրկյան քեզի բան ա ասելու:

Էլավ զուս, ասաց.—Բազրկյան, ի՞նչ կասես:

—Թե էս ամանը Զոփչու տղեն քեզի հատիա ա զրկե, չեմ գիտե՛ինչ ա:

Թագավորի ախչիկը կրտանա տունը կըբանա, կրտենա, որ սատա ոսկի ա:

Կասա. — Յարաք էս մատանի վրեն Զոփչու տղեն դուլուս կենա, որ էս մեկ տարվա մեջ էս զտար ոսկի է դրկե:

Բերանը կրկապա ամանի, կրվերու, ուրան չունքի կարողությունը շատ էր, չէր ուզե բանցընել:

Տարին որ թըմըմավ, էն բազրկյանը էլի գնաց էն քաղաքը: Զոփչու տղեն էկավ ման գալու մելդանը, տեսավ, որ իրան բազրկյանն ա, որ հատիա է դրկե, կէթա խոնարհաբար բազրկյանի հետը կը-բարովի:

Բազրկյանը կասա. — Զոփչու տղա, թագավորի ախչիկը ահա-գին ամարաթներ ա ետ քցե, դու ըստե ինչ բանի ես:

Զոփչու տղան կասա. — Կարելի է, որ մե հատիա էլ էս տարի տանիս:

Բազրկյան կասա. — Բե՛ր, կըտանեմ:

Տղեն հելավ գնաց իրիկուն աղի կուշտը, ասաց. — Աղա՛, հեր-վան բազրկյան էկեր է, մեկ քանի դուռուշ տաճա, տանիմ մե հատիա առնեմ, դրկեմ մեր տունը:

Ասաց. — Որդի՛, աշա քեզի տասնըհինգ դուռուշ, սապախտան գնա՛, ինչ որ ոսատ կըգա, էն ա՛ռ, դրկե՛:

Զոփչու տղեն սապախտան հելավ, գնաց բազար, տեսավ՝ մե մարդ մե դութի կըծախեր:

Ասաց. — Ախպե՛ր, էտու գին ի՞նչ ա:

Ասաց. — Տասնըհինգ դուռուշ ա:

— Ահա՛, — ասաց, — քու տասնըհինգ դուռուշը, տո՛ւր դութին:

Տղեն առավ, ասաց. — Բացեմ տենամ՝ ի՞նչ ա մեջը:

Բացեց տեսավ, որ էրկու հատ Խորասանի կատու է, ծածկեց, բերեց տվեց բազրկյանին:

Բազրկյանը բացեց, ասաց. — Տենամ՝ էս ի՞նչ ա:

Էն էլ տեսավ, որ Խորասանի կատու ա: Դրեց ուրան գյամին, առավ տարավ հետոր: Գնացին ծովի մեջտեղը, գիշեր ժանակ էր, ճամփեն կուրցըրեցին: Լուսը բացվավ, տեսան, որ մե օտար քա-ղաք կերևս, էտ քաղաքը ղեմ արին գնացին, ասին՝ տեսնանք՝ էս ինչ քաղաք ա: Գնացին տեսան՝ մե օտար քաղաք ա: Գյամին էտտեղ կայնեցրին, նոքարի հետ գնացին քաղաք, գնացին մե լավ մարդի պատահեցին: Էտ մարդը տեսավ, որ էս բազրկյանը լավ մարդ է, հրավիրեց ուրան տունը: Բերեց, հացի պատրաստութեն տեսավ, բերեց հացը քցեց, մեկ-մեկ փետ տվեց տղաների ձեռ, կայ-նեցրեց սուփիրի կողքը, բազրկյանն ասեց, թե՛ աղա՛, էս ի՞նչ բան է, որ փետերը տվեցիր էստոնց ձեռքը, կայնան սուփիրի կողքը: Տան-տերն ասաց, թե՛ ներողութեն, բազրկյան, մեր տանը մեծ անիծած-ներ կան, հացի վրային կըփախնեն, ամոթանք կըքաշենք քեզնեն,

ըտուր համար ա: Բազրկյանն ասաց, թե՝ ի՞նչ կուտաս, էտոնց դեղ անեմ ես:

Թե՝ ինչ կուգես, կրտամ:

—Ընձի մե ջուխտ ջանավար ունեմ, ըտոնց դանին են, մե քյա-սիր մարդի ա էտոնք էլ:

Տանտերն ասաց. —Ո՞րտեղ են:

Բազրկյանն ասաց. —Մե դութու մեջ են:

Ասաց. —Էն դութին կըլցեմ ոսկի, կրտամ:

Նոքարին ասաց. —Նոքա՛ր, զնա Զոփչու տղի դութին բե՛:

Նոքարը գնաց, դութին առավ, բերեց տվեց էտորը:

Բազրկյան էտ տանտիրոջը ասաց. —Դոները շինա՛:

Տանտերն ասաց. —Ընչի՞:

Ասաց. —Ըտոնք կրփախնեն, մե քանի օր որ պահեք, սորվեցը-նեք, էլ չեն փախնի:

Էտ մարդը բերեց, դոները փակեց, կատուները դութուց հանեց, բաց թողեց, ըսավ. —Տղե՛ք, փետերը թողե՛ք, նստե՛ք դուք:

Մկները հացի խոտն առան, դուս հելան, կատուները վրա թափ-վան, բռնեցին:

—Տե՛, —ասաց տանտերը, —Էկեք նստե՛ք, հաց ուտենք:

Տանտերը տեսավ, որ բազրկյանի ասածը ճշմարիտ ա, հելավ դութին լցեց օսկի, տվեց բազրկյանին:

Բազրկյանը ասաց. —Աղա՛, մենք ճամփեն կորցրել ենք, շատ ուրախ կըլնենք, որ նշանց տաս:

Տանտերն ասաց. —Դուք ի՞նչ տեղե եք:

Ասաց. —Մենք Ստամբոլու քաղաքիցն ենք:

Ասաց. —Որ էտմալ է, դուք հյուսիս եք էկե, հարա՛վ գացեք, կըգտնեք ձեր ճամբախ:

Հելան էկան էտ մարդեր, էկան ուրանց ճամփեն գտան, գնացին հելան ուրանց քաղաքը:

Բազրկյան ուր ապրանքը տեղավորցըրեց, դութին տվեց նոքա-րի ձեռքը, տարավ թագավորի ախչկան տվեց:

Թագավորի ախչիկը բացեց, տեսավ ոսկին, ասաց. —Էս իմ խոր սիրեն չէ, էս խետ օգուտավոր է էլե, Զոփչու տղեն ընցեր է ուրիշ Հող:

Մնաց տարին թըմըմավ էլի: Զոփչու տղան օրերը կըհամարեր: Մե օր նստավ, տունն ընկավ միտը, նիաթը կախեց: Էկան խարցը-րին, թե՛ տղա՛, ինչի՞ ես նիաթդ կախե:

Զոփչու տղեն ասաց. —Էսա իրեք տարին թըմըմավ, աղեն չի ասե, թե գնա, ալսր ես էլ տանտեր իմ, մեր ու խեր, օղուչաղ ունիմ:

Գնացին աղին ասին, աղան ասաց. —Օղորթ ա, էնոր Յ տա-

րին թրամեր ա, պատրաստութեն տեսեք, որ էն մարդը ճամփու քցենք:

Աղեն էտ տղին շատ կրնդուներ, էկավ, ինչպես հարկն է, ասաց.—Ասա՛, իրեք տարվան քեզի ի՞նչ տամ:

Տղան ասաց.—Աղա՛, ես բամ չեմ ասե, դու քո խիղճը, ինչ կուտաս, տո՛ւ:

Աղեն խանեց իրեք տարվան համար բավականի փող տվեց, խղճով մարդ էր, տղեն առավ փողերը, աղեն ասաց.—Որդի՛, սապախտան էլի կէթաս բազար, մե հատիա էլ կառնես, ինչ որ ուստ կուգա:

Առավտուն տղեն գնաց բազար, տեսավ՝ մե մարդ նստե, կասա. —Խրատ կը ծախեմ:

Տղեն կէթա, կասա.—Խրատի գին ի՞նչ ա:

Կասա.—Մեկը հինգ դուռուշ ա:

Հանե հինգ դուռուշ կուտա, կասա.—Սրտի սիրածը սիրուն կըլ-նի:

Հանե հինգ դուռուշ էլ կուտա, թե՛ մեկ հա՛տ էլ ասա:

Կասա.—Սաբը անողը բարիքի կարժանանա:

Տղեն իջավ գնաց ծովի դրադ, ուրախ-ուրախ գնաց ծովի մոտը, տեսավ, որ գյամի չըկա, ասաց.—Չորովը կէթամ, ի՞նչ կա:

Էկավ, շատը-քիչը Աստված գիտե, ծարավավ, գնաց տեսավ, որ մե տեղ մարդիկը ժողվրդված ա, ասաց, ըստոնց մեջը անպատճառ ջուր կըլնի, չունքի տեղը ավազգուն էր, ջուր չըկար: Էկավ էտ մարդերի մեջը, տեսավ, որ ահազին մարդեր ժողվրվերին, մե հոր կա էտտեղ, վիրը կասին, չի մտնի, որ ջուր քաշին: Էս տղեն գալուն պես, ասին. «Տղա, արի քեզի հիսուն մանեթ թող կըտանք, մտի՛ էս հորի մեջ համ դո՛ւ խմի, համ էլ լի՛ց, տո՛ւր, մենք խմենք»:

Տղեն ասաց.—Փո՛ղը տվեք, մըտնիմ:

Փողն առավ, մտավ խորը, ջուրը քաշեց պրծավ, ուզին, թե խորից խանին, էրկու արար շերիսը կտրին, տղին առան գացին: Տղեն գնաց տեսավ, որ նեխախոտ կիգար, տեսավ, որ մե յանը ջանդակ շատ կա, մե յանը զլոխ շատ կա խանին, ասաց. «Էս ի՞նչ տեղ էր, ընկա, ինձ էլ պըտի էսպեստ անեն, Աստված՛, դու ազատես»:

Տեսավ, որ մեկ մարդ նստեր ա, սեհրի էր էտ տեղը, տեսավ, որ մեկ գորտ մեկ սև մարդի չոքի վրա դրուկ ա, մեկ սիրուն ախչիկ էլ կշտի խետը կայնուկ ա:

Ասաց.—Թազա՛ էկող, —ասաց,—էս գո՞րտն է խորոտ, թե՞ էն կայնուկ ախչիկը:

Իրան մեջը տղան մտածեց, ասաց.—Ես նասյաթ եմ սորվե, էս-տեղ օր պետք չըգա, ո՞րտեղ պըտի պետք գա:

**Ասաց. — Սրտի սիրածը սիրուն կըլնի:**

Մի ասա, Էտոր սեհրին էտ էր, Էտքան մարդիկ կտրվածին էտ մեկ խոսքի համար: Ետու տեսավ, որ էտ խոսքի վրեն էն գորտը պատովեց, Էլավ մե ախչիկ, ինչպես արեգակը մոմի քովը, էնպես էլ էն գորտը էն ախչկա կուշտը:

Ետնա ասացին էտ սեհրիքը՝ բերե՛ք էս մարդին խալաթ: Բերեցին էսպես նոռան նման իրեք հատ բան տվեցին: Էտ մարդն ասաց, թե՛ ինձի խորիցը հանեցե՛ք, ինձի պետք չէ ձեր խալաթը: Ասացին. «Խալաթ էլ կուտանք, քե խորից էլ կըխանենք: Էսքան ջամյաթ կտրվավ, էս մեկ խոսքի համար»:

Հելան տղին խորեն խանեցին դուս, տղան ընկավ ճամփա գնաց: Գնաց, գնաց, իրիկուն հասավ ուրան տունը: Գնաց տեսավ, որ ամարաթներ կա, ասաց՝ ջանըմ, թե էս մեր տներն է, մեզի ամարաթներ չունինք, մեկ էլ միտքը բերեց բազրկանի ասածը, թե թագավորի ախչիկը ամարաթներ է շինե, գնաց ակուշկի հառաջը կայնեց, տեսավ, որ թագավորի ախչիկըն ճանաչեց, տեսավ, որ մե գլուխ էլ կա էտոր խետ պառկած: Մտածեց, ասաց, թե՛ կարելի ա էսի սիրող ըլնի պառկած թագավորի ախչըկա հետ, ձեռի նետանեղը լարեց, որ ակուշկից էն տղին զաներ, մեկ էլ նասիաթը միտքը ընկավ, թե՛ մե փշուր սարը էնեմ, բարիքի կըտիրանամ: Սարը էրավ, տեսավ էրեխեն, ասաց. «Մերիկ, կասիր՝ քու խերը կըգա, բա ո՞ւր ա, չի գա»: «Վա՛, — ըսաց, — ընձե ետ տղեն հելեր ա, էսի իմ տղեն ա»: Էկավ ուր դարպագեն տիեց, նոքարը դուս էկավ, թե ի՞նչ մարդ ես: Ասաց. «Ես Զոփչու տղան եմ, դուռը բա՛ց»:

**Ասաց. — Թագավորի ախչիկ էսա վախտ դուռ չի բանա, Զոփչու տղա ըլնես, չըլնես:**

Մնաց քուչեն: Մե անգամ էլ թրիսթրիսցըրեց, թագավորի ախչիկը ուրան նոքարին կանչեց, ասաց. «Էտ ի՞նչ մարդ ա, էսա վախտ դուռը կըթրիսթրիսցընա»: Ասաց. «Զեմ գինա, կասա՝ ես Զոփչու տղեն եմ, արի դուռը բա՛ց»: Հելավ թագավորի ախչիկը նոքարի հետ դարպագի հետեւ կայնավ, ասաց. «Դու ի՞նչ մարդ ես»:

**Ասաց. — Ես Զոփչու տղեն եմ, թագավորի՝ ախչիկ, դու ինձի չըղրկեցի՞ր իրեք տարի ժամանակի, հմի էկեր եմ:**

**Ասաց. — Դու ի՞նչ ես դրկե ինձի հատիա, որ դու Զոփչու տղեն ես:**

— Ղրկեր եմ մե աման ջոկ, մեկ հատ էլ դութիկ, դուռը բա՛ց: Դու ինձ չասի՞ր, թե՛ գնա հալալ մարդու ծառայե՛, էտ ես ու դու գիտենք, ուրիշ մարդ չըգիտե, բա՛ց դուռը:

Դուռը բացեց, գնացին ներս, թագավորի ախչիկը ասաց. «Զոփ-

չո՞ւ տղա, ամանի մեջ ի՞նչ կար»: Ասաց. «Ամանի մեջ կուպր կար, դութու մեջ էրկու կատու»:

Բերեց ամանն ու դութին դրեց հառեջը, ասեց.—Բա՛ց, տեսինք՝ է՞ն է:

Բացեց տեսավ, որ էրկուան էլ ոսկի, մնաց մտածմունքի մեջ:

Հելավ գնաց, բազրկանին գտավ, ըտուր բազրկանը պատմեց, ինչ էլեր էր, ետնա էկավ ասաց. «Թագավորի՛ ախչիկ, էսպես աըլել»:

—Թագավորի՛ ախչիկ, իրեք հատ էլ նուռ եմ բերե, առ տո՛ւր էրեխին:

Առավ թագավորի ախչիկ, տեսավ, որ էսի նուռ չէ, անգին քար է, արեգակի պես լուս կուտա:

Ասեց.—Իմ խոր խազնի մեջ ըստուր պես բան չեմ տիսե ես, մե հատ տար խուրտե՛, տենանք՝ ինչ աժե՞:

Տարավ տղեն էտ մեկը խուրտեց: Սառափը ասաց. «Գնա մե համբա՛լ բե»:

Համբալը բերեց, քանի որ կաներ համբալը՝ շալկեց ոսկի, ըտուր խուրդեն էր, բերեց տուն:

Ասաց.—Չոփչո՞ւ տղա, գնա զարգյա՛րը բե:

Գնաց Չոփչու տղեն մե լավ զարգյար բերեց:

Ասաց.—Չարգյա՛ր, քառասուն սինի կըշինես ոսկուց, ուր գտալներով, չունքի թագավորը պիտի գա մեզ մոտ դոնաղ ուր սի-նողներով:

Ասաց.—Չոփչո՞ւ տղա:

Ասաց.—Ի՞նչ է, թագավորի՛ ախչիկ:

Ասաց.—Գնա՛, թարգի բե՛:

Գնաց մե թարգի բերեց:

Բերեց, թագավորի ախչիկը ասաց.—Քեզնե կուգեմ խաս կտոռից թագավորի լայեղ չորեր էս Չոփչու տղի համար:

Գնաց բերեց, կտրեց կարեց, ինչպես կարգն էր:

Ասաց.—Չոփչո՞ւ տղա, էս չորերը կըխազնես, կէթաս թագա-վորին կըղանչես մեզի դոնաղ ուր սինողներով:

Չոփչու տղեն գնաց կանչեց, թագավորը ուրախցավ, ինքն իրան մտածեց, թե ես լսել ի, թե խազնից գողացե, ամարաթ է շինե, մե էթամ տենամ:

Վերուց ուրան սինողները, էկավ դոնաղ ուրան ախչկա տունը:

Թագավորի ախչիկը ասաց.—Գնա՛ էն բազրկանն է բե, որ ին-ձի հատիս ա բերե:

Գնաց էն բազրկանին էլ բերեց:

Գնաց մե լավ աշչի՞մ էլ բերեց, որ ընտոնց լավ կերակուլ պատրաստա:

Պատրաստեց, բոլորի ամանի մեջ աղ ցկեց, թագավորի ամանի մեջ աղ չըցկեց: Էկան նստան, սկսան ուտել: Թագավորի ախչիկը տեսավ, որ հըմմեն կուտին, թագավորը չի ուտա:

Կասա.—Թագավոր՝, ընչի՞ հըմմեն կուտեն, դու չես ուտե:

Թագավոր կասա.—Ամանիս մեջ աղ չըկա:

—Ի՞նչի, —կըսե, —չես ուտե, ոսկի ամանի մեջ, ոսկե գդով, ի՞նչ անենք, որ աղ չըկա:

—Զէ՛, —կըսե, —առանց աղ չի ուտիի:

—Որ էտպես է, —կասա, —ես քեզի աղի դուար կըսիրի, ինչի՞ դու ինձի աչքից քցիր:

Սինողները ասին.—Թագավոր՝, ախչիկը ճշմարիտ է, աշխրքի մեջ հըմմընիցը քաղցրը աղն է, մենք չըհամարձակվանք, որ քեզի ընդեմ խոսենք:

Բերեց աղ քցեց ամանը, թագավորը կերավ:

Ուտելուց ետք թագավորի ախչիկը ասաց.—Հըմմենքը ուր սինին ուր գտլով տանի ուրան:

Թագավորը շատ զարմացք մնաց:

Ասաց. «Ես թագավոր ըլնեմ, չըկարնամ էս բանն անեմ, էնի անսա՞»:

Բոլորը հելան գացին, ասաց.—Թագավոր՝, դու ե՛տ ընկի:

Թագավորը ետ ընկավ, ախչիկը ասաց.—Թագավոր՝, կըտենամ, որ մտածմունքի մեջ ես ընկե դու:

—Հա՛, —կասա թագավոր, —ես զարմանք եմ մնացե, թե դու էպան հարստութեն հո՞ւստ ես գտե:

Թագավորի ախչիկը հելավ գնաց էն ամանն ու դութին բերեց, ասաց.—Թագավոր՝, էս ամանը քու սիքեն ա, էս դութին ի՞նչ սիքա է:

Բերեց, թագավորը իշկաց, զարմացավ էտ դութու ու էտ սիքի վրեն:

Բերեց իրեք նուռն էլ դրեց թագավորի հառեջ, ասաց.—Ըստոնք էլ տե՛ս:

Թագավորն բացեց տեսավ, շիվարած մնաց, ընտուր էրկու հատը արժեր ուրան սաղ խազնեն:

Ասաց.—Էս հո՞ւստ ա ձեզի:

Ախչիկը ասաց.—Ա՛ռ էս մեկ նուռը քեզի փեշքաշ, ես քեզի ետո կըպատճեմ ըտրա եղելությունը:

Թագավորն էլ ասաց.—Եփ որ դու էս նուռը ինձի բախչեցիր, ես

Էլ իմ թագավորությունը քեզի կը բաշխեմ: Ինձնեն ետ դուք կը լինիք  
թագավոր:

Մնաց մե ժամանակ, էտ թագավորը մեռապ, Զոփչու տղան  
նստավ էնոր տեղ: Աստված լուսավորցը ընդոնց հոգին էլ, ձեր  
էլ՝ ծնողաց:

Երկնքեն իրեք խնձոր ընկապ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն  
էլ՝ ականճ անողին:

